ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***Ք. Երևան***

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. ապրիլի 25-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

***Նիստին մասնակցում էին՝***

***Կոմիտեի անդամներ***

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Արման Ալաբերքյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2.01 կետով 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

**23/04/2022թ. «Փյունիկ-աղջիկներ»-«Հայասա» (ԿԲԽ-031) հանդիպման ժամանակ «Փյունիկ-աղջիկներ» թիմի ֆուտբոլիստուհի Լուիզա Ղազարյանի (No. 24763) կողմից ոչ մարզական պահվածք դրսևորվելու վերաբերյալ, որը սակայն չի նկատվել խաղը սպասարկող մրցավարի կողմից՝ համաձայն վերջինիս կողմից ներկայացված զեկուցագրի:**

---

Ուսումնասիրելով հանդիպման տեսագրությունը և ղեկավարվելով ՀՖՖ կանոնակարգի 12-րդ հոդվածի 12.02 կետով Կոմիտեի կողմից հարուցել է կարգապահական վարույթ;

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Փյունիկ-աղջիկներ» թիմի ֆուտբոլիստուհի Լուիզա Ղազարյանի (No. 24763) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 11.01-րդ կետով և 46 հոդվածի 27-րդ կետով՝ «Փյունիկ-աղջիկներ» թիմի ֆուտբոլիստուհի Լուիզա Ղազարյանին (No. 24763) որակազրկել 5 խաղով և «Փյունիկ»

ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: